ՀԱՅԵՐԻ ՄԻՋՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՍՍՀՄ-ՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

Ռուսական կայսրության մեջ եղած հայկական գաղթավայրերի մեծ մասում, 1897 թ. մարդահամարի տվյալներով, հայերն աչքի էին ընկնում ուրբանիզացման բարձր աստիճանով[1]։ Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, Ռուսական կայսրության քաղաքներում ապրում էր ամբողջ բնակչության 13,3%-ը (ռուսների՝ 15,8, իսկ հայերի՝ 23,2%-ը)։ Ըստ որում, նշված թվականին, Հայկական ՍՍՀ ներկա տարածքում քաղաքաբնակ էր հայերի 11,4%-ը, իսկ կայսրության մնացած վայրերում՝ 32,4%-ը[2]։ Հայկական ՍՍՀ ներկայիս տարածքում ապրել է կայսրության ամբողջ հայ բնակչության 43,5%-ը, քաղաքային ամբողջ հայ բնակչության 21,3%-ը և գյուղական ամբողջ հայ բնակչության 50,3%-ը[3]։ Այսինքն՝ հայերի կեսից ավելին ապրում էր Հայկական ՍՍՀ ներկա տարածքից դուրս։

Այժմ տեսնենք, թե ինչպես է փոխվել հայերի տարաբնակեցումը ՍՍՀՄ-ում 1926—1970 թթ. (աղյուսակ № 1)։

Աղյուսակից որոշակիորեն երևում է ՍՍՀՄ հայ բնակչության տեղաշարժը դեպի Հայկական ՍՍՀ։ Նկատելի է, որ բոլոր տարիներին ՍՍՀՄ հայ բնակչության հիմնական մասն ապրել է Հայկական ՍՍՀ-ում և աշխարհագրական տեսակետից նրանից ոչ շատ հեռու գտնվող վայրերում (Վրաստան, Ադրբեջան, ՌՍՖՍՀ հարավային մասը, ինչպես նաև Ուկրաինա, Ուզբեկստան, Թուրքմենիա)։ Հայերի տարաբնակության այդ հին և նոր վայրերում 1926—1970 թթ. նկատվում է հայ բնակչության նվազում (Ուզբեկստանում մինչև 1959 թ. չի նվազել)։ Մոլդավիայում հայերի տոկոսն աճել է մինչև 1959 թ., ապա նվազել է աննշան չափով։ Աղյուսակը եզրափակում են ՍՍՀՄ-ում հայերի տարաբնակության չորս նորագույն վայրեր (Կիրգիզիա, Տաջիկստան, Ղազախստան և Բելոռուսիա)։ Նրանցում 1926—1970 թթ. հայ բնակչության տոկոսն աճել է։ Ըստ որում, 1959—1970 թթ. այդ աճը զգալիո-

---

1 *Հոդվածը շարադրված է գլխավորապես 1926, 1959 և 1970 թթ. համամիութենական մարդահամարների տվյալների հիման վրա։ Մասամբ օգտագործված են նաև 1897 թ. Ռուսական կայսրության ասաչին համընդհանուր մարդահամարի տվյալները։ Մարդահամարների տվյալները միշտ չէ, որ համարժեք են։ Այդպիսին դարձնելու համար դրանք համադրել ենք, համեմատել համապատասխան գրականության և աղբյուրների տվյալների հետ և կատարել անհրաժեշտ հաշվարկներ։*

2 «Общий свод по Империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенного 28 января 1897 г.», т. II, СПБ, 1905, *էջ 2, 6, 19, Ջ. Կ ո ր կ ո տ յ ա ն, Խորհրդային Հայաստանի բնակչությունը, Երևան, 1932, աղյուսակ № 3։*

3 *Նույն տեղում։*

Աղյուսակ № 1

Հայերի տարաբնակեցումը ՍՍՀՄ-ում 1926, 1959 և 1970 թթ.
(ըստ մարդահամարների տվյալների և տոկոսներով)[4]

Միութենական հանրապետություններ	1926			1959			1970		
	Հայերի բացարձակ թիվը և տոկոսը			Հայերի բացարձակ թիվը և տոկոսը			Հայերի բացարձակ թիվը և տոկոսը		
	ՍՍՀՄ ամբողջ հայ բնակչության մեջ	ՍՍՀՄ-ում հայ բնակչության մեջ	ՍՍՀՄ-ում հայ բնակչության մեջ	ՍՍՀՄ ամբողջ բնակչության մեջ	ՍՍՀՄ-ում հայ բնակչության մեջ	ՍՍՀՄ-ում հայ բնակչության մեջ	ՍՍՀՄ ամբողջ բնակչության մեջ	ՍՍՀՄ-ում հայ բնակչության մեջ	ՍՍՀՄ-ում հայ բնակչության մեջ
ՍՍՀՄ	1568197 100	555677 100	1012520 100	2786912 100	1576452 100	1210460 100	3559151 100	2305276 100	1253875 100
Այդ թվում									
Հայկական ՍՍՀ	743571 47,41	149183 26,85	594388 58,70	1551610 55,67	810091 51,39	741519 61,26	2208327 62,05	1383961 60,03	824366 65,74
Վրացական ՍՍՀ	307018 19,58	149545 26,91	157473 15,55	442916 15,89	242399 15,38	200517 16,56	452309 12,71	255115 11,07	197194 15,73
Ադրբեջանական ՍՍՀ	282004 17,98	103280 18,59	178724 17,65	442089 15,86	268509 17,03	173580 14,34	483520 13,58	344577 14,95	138943 11,08
ՌՍՖՍՀ	183780 11,72	108394 19,51	75386 7,44	255978 9,18	171611 10,88	84367 6,97	298718 8,39	215749 9,36	82969 6,62
Ուկրաինական ՍՍՀ	21060 1,34	16559 2,98	4501 0,44	28024 1,00	25278 1,60	2746 0,23	33439 0,94	31101 1,35	2338 0,19
Ուզբեկական ՍՍՀ	15300 0,98	14642 2,63	658 0,06	27370 0,98	25567 1,62	1803 0,15	34174 0,96	32309 1,40	1865 0,15
Թուրքմենական ՍՍՀ	13859 0,88	13418 2,41	441 0,04	19696 0,71	19374 1,23	322 0,03	23054 0,65	22463 0,97	591 0,05
Մոլդավական ՍՍՀ	287 0,02	58 0,01	229 0,02	1218 >0,04	949 0,06	269 0,02	1336 <0,04	1154 0,05	182 0,01
Կիրգիզական ՍՍՀ	278 0,02	225 0,04	53 0,005	1919 <0,07	996 0,06	923 0,08	2688 >0,07	1288 0,06	1400 0,11
Տաջիկական ՍՍՀ	171 0,01	156 0,03	15 0,001	2878 0,10	2486 0,16	392 0,03	3787 0,11	3422 0,15	365 0,03
Ղազախական ՍՍՀ	141 0,009	125 0,02	16 0,002	9284 0,33	5971 0,38	3313 0,27	12184 0,36	9677 0,42	3137 0,25
Բելոռուսական ՍՍՀ	99 0,006	90 0,02	9 0,001	1751 0,06	1234 0,08	517 0,04	2362 0,07	1999 0,09	363 0,03
Այլ հանրապետություններ	—	—	—	2179 0,11	1987 0,13	192 0,02	3253 0,07	2461 0,10	792 0,01

[4] «Всесоюзная перепись населения 1926 года», т. VIII, М., 1928, էջ 15—19, 200—203; т. IX, М., 1929, էջ 34—50; т. X, М., 1928, էջ 9—15; т. XI, М., 1929, էջ 8—17; т. XIII, М., 1929, էջ 39—41; т. XIV, М., 1929, էջ 7—21; т. XV, М., 1928, էջ 8—13, 49—52; т. XVII, М.. 1929, էջ 8—25; «Итоги всесоюзной переписи населения 1959 г.», Груз. ССР, М., 1963, էջ 134—137; Азер. ССР, М., 1963, էջ 134—139; Арм. ССР, М., 1963, էջ 102—103; РСФСР, М., 1963, էջ 300—311; Молд. ССР, М., 1962, էջ 90—93; Укр. ССР, М., 1963, էջ 168—173; Бел. ССР, М., 1963, էջ 124—125; Узб. ССР, М., 1962, էջ 138—143; Тадж. ССР, М., 1963, էջ 116—121; Казах. ССР, М., 1962, էջ 162—167; Туркм. ССР, М., 1963, էջ 128—131; Кирг. ССР, М., 1963, էջ 128—131; СССР (сводный том), М., 1962, էջ 190—191, 196—197; «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. IV, М., 1973, էջ 27—28, 30, 35, 37—39, 49 — 60, 158 — 169, 193 — 195, 205 — 210, 226 — 231, 254 — 257, 265 — 268, 277 — 278, 286 — 289, 296 — 298, 304 — 305, 308 — 310.

րեն դանդաղել է։ Եթե 1926—1959 թթ. աճել է այդ հանրապետությունների թե՛ քաղաքային, թե՛ գյուղական հայ բնակչությունը, ապա 1959—1970 թթ. աննշան չափով աճել է Կիրգիզիայի և Տաջիկստանի գյուղական, իսկ Ղազախստանի և Բելոռուսիայի՝ քաղաքային հայ բնակչությունը։

1970 թ. Հայկական ՍՍՀ-ից դուրս քաղաքաբնակ էր հայերի 68,2%-ը։ Այս, ինչպես նաև քաղաքներում էթնիկական պրոցեսների արագացման պատճառով, առավել ուշադրություն ենք դարձնում քաղաքային հայ բնակչության ուսումնասիրությանը։ Արդեն 1926 թ., բացի Հայկական ՍՍՀ-ից և երկրում հայերի տարաբնակության հին վայրերից, ՍՍՀՄ-ում ամենուրեք հայ բնակչության կեսից ավելին ապրում էր քաղաքներում։ Բանն այն է, որ պատմական զարգացման հետևանքով ամեն ժողովուրդ համեմատաբար ավելի գյուղաբնակ է իր էթնիկական բնատարածքում, քան օտար միջավայրում[5]։ 1926 թ. քաղաքներում ապրում էր ՍՍՀՄ ամբողջ բնակչության 17,8, ռուսների՝ 21,3 և հայերի՝ 35,4%-ը։ Վերջինս հետևանք էր այն բանի, որ հայերի 52,6%-ը ապրում էր Հայկական ՍՍՀ-ից դուրս և ուներ քաղաքաբնակության բարձր աստիճան։ 1959 և 1970 թթ. ևս քաղաքաբնակության աստիճանով հայերը գերազանցում էին միութենական հանրապետությունների թե՛ բնիկ ժողովրդին, թե՛ ամբողջ բնակչությանը։ Համատարած ուրբանիզացման հետևանքով արդեն 1959 թ. հայերը բոլոր հանրապետություններում ունեին քաղաքաբնակության բարձր աստիճան։ Առանձին միութենական հանրապետություններում հայերի ուրբանիզացման աստիճանը 1926—1970 թթ. փոփոխվել է տարբեր ձևերով։ Ըստ այդմ էլ հանրապետությունները պայմանականորեն կարելի է բաժանել 4 խմբի։

Առաջին խումբ—Հանրապետություններ, որոնցում քաղաքաբնակ հայերի տոկոսն աճել է վերընթաց գծով։ Այս խումբը կազմում են Հայկական, Ադրբեջանական և Մոլդավական ՍՍՀ-ները։ Ադրբեջանը և Մոլդավիան, Հայկական ՍՍՀ-ի հետ, 1926 թ. ունեին հայերի քաղաքաբնակության ամենացածր աստիճանները։ Պատահական չէ, որ նրանցում 1926—1970 թթ. հայերի ուրբանիզացումն ընդհանուր տեմպերից արագ է կատարվել։ Ի տարբերություն մյուս երկու հանրապետությունների, Հայկական ՍՍՀ-ում այդ երևույթը պայմանավորված է, բացի ներհանրապետական տեղաշարժից, հայերի զգալի ներհոսքով։ Վերաբնակիչների մեծ մասը հաստատվել և հաստատվում է Հայկական ՍՍՀ քաղաքներում։

Երկրորդ խումբ—Հանրապետություններ, որոնցում քաղաքաբնակ հայերի տոկոսն աճել է դանդաղորեն։ Դրանք են՝ ՌՍՖՍՀ-ն, Ուկրաինան և Վրաստանը։ Վերջինս այս խմբին է միացել 1926 թ.՝ քաղաքաբնակ հայերի համեմատաբար բարձր տոկոսի (48,7) հետևանքով։ 1926 թ. ՌՍՖՍՀ-ում այն կազմում էր 59, իսկ Ուկրաինայում՝ 77,8%։ Այսպիսով, այս խումբը կազմում են այն վայրերը, որոնցում 1926 թ. հայ բնակչությունն ուներ միջին և դրանից բարձր քաղաքաբնակություն։ Այս հանրապետություններում 1926—1970 թթ. հայերի ուրբանիզացումը ընդհանուր տեմպերից դանդաղ է կատարվել։

Երրորդ խումբ—Հանրապետություններ, որոնցում քաղաքաբնակ հայերի տոկոսը համեմատաբար կայուն է։ Դրանք են Ուզբեկստանը և Թուրքմենիան,

---

[5] В. И. Козлов, Национальности СССР, М., 1975, էջ 84։

որոնք աչքի են ընկնում 1926 թ. քաղաքաբնակ հայերի ամենաբարձր տոկոսով (95,7 և 96,8)։

Չորրորդ խումբ—Հանրապետություններ, որոնցում քաղաքաբնակ հայերի տոկոսն անկայուն է։ Այս խումբը կազմում են Կիրգիզիան, Տաջիկստանը, Ղազախստանը և Բելոռուսիան, այսինքն՝ հայերի տարաբնակության նորագույն վայրերը, որոնք 1926 թ. ունեին հայերի քաղաքաբնակության բարձր տոկոսներ (80-ից բարձր)։ Չնայած այդ հանրապետություններում ուրբանիզացման անշեղ վերելքին, քաղաքաբնակ հայերի տոկոսը գրանցում 1926—1959 թթ. զգալիորեն նվազել է, իսկ 1959—1970 թթ. վերստին աճել (բացի Կիրգիզիայից, որտեղ 1970 թ. իջել է 47,9-ի)։

Այսպիսով, միութենական հանրապետություններում 1926—1970 թթ. քաղաքաբնակ հայերի տոկոսը փոփոխվել է ուրբանիզացման ընդհանուր տեմպերից անկախ։ ՍՍՀՄ-ում հայերի տարաբնակության վայրերի ձևավորման ժամանակը և 1926 թ. նրանցում հայերի քաղաքաբնակության աստիճանն այն երկու գործոններն են, որոնք որոշակիորեն ազդել են 1926—1970 թթ. նրանցում քաղաքաբնակ հայերի տոկոսի փոփոխման վրա։ 1926 թ. հայերի քաղաքաբնակության ամենացածր աստիճաններ ունեցող Հայկական ՍՍՀ-ը և հայերի տարաբնակության հին վայրերը 1926—1970 թթ. ի հայտ են բերել քաղաքաբնակ հայերի տոկոսի ամենամեծ աճ (Վրաստանը տոկոսային հատկանիշով միացել է ուրիշ խմբի)։ Քաղաքաբնակ հայերի տոկոսը այդ տարիներին ամենակայունն է եղել XIX դ. վերջերին—XX դ. սկզբներին տարաբնակեցված և 1926 թ. հայերի քաղաքաբնակության ամենաբարձր տոկոսներ ունեցող Թուրքմենիայում և Ուզբեկստանում։ 1920 թ. հետո ձևավորված տարաբնակության վայրերում քաղաքաբնակ հայերի տոկոսը 1926—1970 թթ. ունեցել է մեծ տատանումներ։

1926 թ. հայերը զգալի տոկոս էին կազմում Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքմենիայի քաղաքային բնակչության թվում (համապատասխանաբար 25,5, 16,7 և 11,2%)։ Այդ թվականին ՍՍՀՄ քաղաքային ամբողջ հայ բնակչության 26,91%-ն ապրել է Վրացական ՍՍՀ-ում, 26,85%-ը՝ ՀՍՍՀ-ում և 18,59%-ը՝ Ադրբեջանական ՍՍՀ-ում (աղյուսակ N 1)։ Հայկական ՍՍՀ-ում քաղաքային հայ բնակչության փոքր բաժինը հետևանք է այդ ժամանակաշրջանի հայկական քաղաքների բնույթի և չափերի։ 1926 թ. Արևելյան Հայաստանի քաղաքները՝ Երևանը և Ալեքսանդրապոլը, առևտրա-արհեստավորական փոքր քաղաքներ էին, մինչդեռ Թիֆլիսում, Բաքվում և Անդրկովկասի այլ քաղաքներում ապրում էր մեծաթիվ հայություն։ Այդուհանդերձ, 1926 թ. ՀՍՍՀ քաղաքներում հայերը կազմել են բնակչության 89,9%-ը։ Դրա հիմնական պատճառն այն է, որ «քաղաքային մասնագիտություններով» (արհեստներ, առևտուր և այլն) զբաղվողները մեծ մասամբ հայերն էին։

1926 թ. հայերը զգալի տոկոս (11,2) են կազմել նաև Թուրքմենիայի քաղաքներում։ Դա խոսում է այն մասին, որ հայերը, ռուսների հետ միասին, ամենագործուն մասնակցություն են ունեցել Թուրքմենիայի նորաստեղծ որոշ քաղաքների բնակչության ձևավորման մեջ։

1959 և 1970 թթ. հայերը ՍՍՀՄ-ում քաղաքաբնակության «առաջնությունը» զիջել են ռուսներին։ Դա առաջին հերթին բացատրվում է ռուսների

մեծ շարժունակությամբ[6] և նորաստեղծ քաղաքների բնակչության ձևավորմանը նրանց ունեցած ակտիվ մասնակցությամբ (հատկապես՝ Սիբիրում)։ Երկրորդ պատճառը քաղաքներում արագորեն կատարվող միջէթնիկական պրոցեսներն են։ 1926, 1959 և 1970 թթ. բոլոր միութենական հանրապետություններում բնիկ ժողովուրդը ուրբանիզացման աստիճանով զիջել է ամբողջ բնակչությանը, իսկ վերջինս՝ հայերին։ Դա բնական է, քանի որ, ինչպես ասվեց, ամեն ժողովուրդ համեմատաբար ավելի գյուղաբնակ է իր էթնիկական տարածքում։ Եվ քանի որ ամենուրեք բնիկ ժողովուրդը կազմում է հանրապետության բնակչության կեսից ավելին (բացառություն էին կազմում Մոլդավիան 1926 թ., Ղազախստանը և Կիրգիզիան՝ 1959 և 1970 թթ.), նրա ուրբանիզացման մակարդակը որոշիչ դեր է խաղում տվյալ հանրապետության ամբողջ բնակչության ուրբանիզացման տոկոսի մեջ։ Հետաքրքիր է, որ քաղաքաբնակության տոկոսով 1926 թ. ռուսները հայերին գերազանցել են միայն Հայկական ՍՍՀ-ում և հայերի տարաբնակության հին վայրերում (Վրաստան, Ադրբեջան, Մոլդավիա)։ Լինելով այդ հանրապետությունների համեմատաբար նոր վերաբնակիչներ, ռուսները հաստատվել են գլխավորապես քաղաքներում։ Այս օրինաչափությունը պահպանվել է Անդրկովկասում նաև 1959 և 1970 թթ.։

Միութենական հանրապետությունների տարածքում տարաբնակության վաղեմությունն աղդել է նաև հայերի քաղաքաբնակության տոկոսի վրա։ Հայերի քաղաքաբնակության ամենացածր տոկոսը 1926 թ. Հայկական ՍՍՀ-ում էր (20,1) և հայերի տարաբնակության հին վայրեր Մոլդավիայում, Ադրբեջանում և Վրաստանում (համապատասխանաբար 20,2, 36,6 և 48,7)։ ՌՍՖՍՀ-ում քաղաքաբնակ էր հայերի 59%-ը, Ուկրաինայում՝ 77,8%-ը։ 1926 թ. հայերն առավել քաղաքաբնակ էին XX դ. ձևավորված տարաբնակության վայրերում (80,9—96,8%)։

1926—1970 թթ. հայերի տեսակարար կշիռն անշեղորեն աճել է միայն Հայկական ՍՍՀ քաղաքներում։ Դրան նպաստել են ոչ այնքան քաղաքային բնակչության բնական աճը և ներհանրապետական տեղաշարժը, որքան հայերի ներհոսքը (միութենական այլ հանրապետություններից և արտասահմանյան երկրներից) դեպի Հայկական ՍՍՀ քաղաքները։ Միայն Երևանի բնակչությունը 1926—1970 թթ. աճել է 11,8 անգամ, հասնելով 767 հազարի։ Սոցիալիզմի պայմաններում, երբ ազգային փոքրամասնությունները չեն ենթարկվում կրոնական և ազգային խտրականության, հայերի շարժումը դեպի Հայկական ՍՍՀ քաղաքները այլևս չի բացատրվում միայն քաղաքային կյանքի փորձով և որևէ «քաղաքային մասնագիտության» տիրապետելով։ Սովետական Հայաստանի քաղաքները դարձել են ազգային վերածննդի խոշոր կենտրոններ և դեպի իրենց են ձգում համայն հայությանը։ Տարբեր միջավայրերում կրթություն ստացած և իրենց վարպետությունը կատարելագործած հայերը (արհեստավորներ, մտավորականներ, մշակույթի գործիչներ, տեխնիկական կադրեր և այլն), վերադառնալով Հայաստան, մեծապես նպաստեցին իրենց հայրենիքի վերածննդին։

---

6 Ըստ 1970 թ. մարդահամարի տվյալների, ռուսները ներկայումս ՍՍՀՄ-ի «ամենաշարժուն» ժողովուրդն են. 1968—1969 թթ. բնակության վայրը փոխել է ՍՍՀՄ ամբողջ ռուս բնակչության 6,7%-ը (В. А. Болдырев, Итоги переписи населения СССР, М., 1974, էջ 55)։ Տեղափոխվածները հիմնականում վերաբնակվում են քաղաքներում։

Աղյուսակ № 2

Ամբողջ և հայ բնակչության փոփոխումը միութենական հանրապետություններում 1926—1970 թթ.
(ըստ մարդահամարների տվյալների)[1]

Միութենական հանրապետություններ	1959 թվականին 1926 թ. համեմատությամբ քանի անգամ է աճել						1970 թվականին 1959 թ. համեմատությամբ քանի անգամ է աճել					
	Ընդհանուր		Քաղաքային		Գյուղական		Ընդհանուր		Քաղաքային		Գյուղական	
	Ամբողջը	Հայերը	Ամբողջը	Հայերը	Ամբողջը	Հայերը	Ամբողջը	Հայերը	Ամբողջը	Հայերը	Ամբողջը	Հայերը
Հայկական ՍՍՀ	2,00	2,09	5,31	5,43	1,24	1,25	1,41	1,42	1,68	1,71	1,15	1,11
Վրացական ՍՍՀ	1,53	1,44	2,93	1,62	1,13	1,27	1,16	1,02	1,31	1,05	1,05	0,98
Ադրբեջանական ՍՍՀ	1,63	1,57	2,86	2,60	1,17	0,97	1,38	1,09	1,45	1,28	1,32	0,80
ՌՍՖՍՀ	1,27	1,39	3,77	1,58	0,73	1,12	1,10	1,17	1,31	1,26	0,88	0,98
Ուկրաինական ՍՍՀ	1,44	1,33	3,42	1,53	0,97	0,61	1,19	1,13	1,34	1,23	0,94	0,85
Ուզբեկական ՍՍՀ	1,45	1,79	2,29	1,75	1,22	2,74	1,46	1,25	1,58	1,26	1,39	1,03
Թուրքմենական ՍՍՀ	1,55	1,42	5,83	1,44	0,95	0,73	1,42	1,17	1,48	1,16	1,38	1,83
Մոլդավական ՍՍՀ	5,04	4,24	7,80	16,36	4,58	1,17	1,24	1,10	1,76	1,22	1,09	0,68
Կիրգիզական ՍՍՀ	2,09	6,90	5,87	4,43	1,57	17,41	1,42	1,40	1,58	1,29	1,34	1,52
Տաջիկական ՍՍՀ	2,39	16,83	16,07	15,94	1,69	26,13	1,46	1,32	1,67	1,38	1,37	0,93
Ղազախական ՍՍՀ	1,74	65,84	10,09	47,77	1,06	207,06	1,40	1,38	1,61	1,62	1,23	0,95
Բելոռուսական ՍՍՀ	1,62	17,69	2,93	13,71	1,35	57,44	1,12	1,35	1,57	1,62	0,91	0,70

[1] Տե՛ս № 1 աղյուսակի աղբյուրները։

1926—1970 թթ. շատ միութենական հանրապետությունների քաղաքներում հայերի տեսակարար կշիռն անշեղորեն նվազել է։ Մոլդավիայում այն աճել է 1926—1959 թթ., ապա նվազել, իսկ ՌՍՖՍՀ-ում նվազել է 1959 թ. և նույնությամբ պահպանվել 1970 թ.։ Միայն Ղազախստանի և Բելոռուսիայի քաղաքներում հայերի տոկոսն աճել է մինչև 1959 թ. և նույնությամբ պահպանվել 1970 թ. (համապատասխանաբար 0,15 և 0,05%)։ Այս և այլ երևույթների պատասխանները փորձենք գտնել բնակչության աճի աղյուսակից (աղյուսակ № 2)։

Ընդհանուր առմամբ, հանրապետությունները կարելի է բաժանել երկու խմբի. ա. հանրապետություններ, որտեղ հայերի աճը գերազանցել է ամբողջ բնակչության աճը և բ. հանրապետություններ, որտեղ հայերի աճը զիջել է ամբողջ բնակչության աճին։

1926—1959 թթ. առաջին խումբը կազմել են Հայաստանը, ՌՍՖՍՀ-ն, Ուզբեկստանը և հայերի տարաբնակության նորագույն վայրերը։ Հայկական ՍՍՀ-ում, ինչպես նշվեց, հատկապես զգալի է քաղաքային հայ բնակչության աճը։ ՌՍՖՍՀ-ում նշված ժամանակամիջոցում հայերի մի փոքր բարձր աճը բացատրվում է նրանց համեմատական բարձր բնական աճով։ Գյուղերում աճի զգալի տարբերությունը հետևանք է ուրբանիզացման տարբեր տեմպերի։ Ուզբեկստանում 1926—1959 թթ. հայերի բարձր աճը հետևանք է ներհոսքի։ Ղազախստանից այնտեղ է տեղափոխվել փոքրաթիվ գյուղական հայ բնակչություն, որի հետևանքով Ուզբեկստանում քաղաքաբնակ հայերի տոկոսը նվազել է։ Տարաբնակության նորագույն վայրերում (Կիրգիզիա, Տաջիկստան, Ղազախստան, Բելոռուսիա) հայերի աճը բազմիցս գերազանցել է ամբողջ բնակչության աճը։ Հատկապես շատ է աճել գյուղական հայ բնակչությունը (Ղազախստանում՝ 207 անգամ), որի հետևանքով այդ հանրապետություններում նկատվում է քաղաքաբնակ հայերի տոկոսի զգալի անկում։ Ղազախստանում գյուղաբնակ հայերի աննախընթաց աճը կապված է խամ ու խոպան հողերի յուրացման հետ։ 1950-ական թվականներին Ղազախստանի գյուղաբնակ հայերի որոշ մասը տեղափոխվել է հարևան Կիրգիզիայի գյուղերը, որի քաղաքներում հայերի աճի տեմպերը ետ են մնացել ընդհանուր աճից։ Տաջիկստանում գյուղական հայ բնակչության ներհոսքը համեմատաբար քիչ է նվազեցրել քաղաքաբնակ հայերի տոկոսը, քանի որ հայերի ուրբանիզացումը կատարվել է ընդհանուր տեմպերին համընթաց։ Չնայած գյուղական հայ բնակչության գերակշիռ ներհոսքին, Ղազախստանի և Բելոռուսիայի քաղաքներում ևս հայերի աճը շատ մեծ է եղել։ Նշանակում է, այդ հանրապետությունների քաղաքները ևս ունեցել են հայ բնակչության ներհոսք (տե՛ս աղյուսակները) Բելոռուսիայի գյուղերում 1926—1959 թթ. հայերի մեծ աճը հետևանք է Ուկրաինայի (և մասամբ՝ Մոլդավիայի) գյուղերից հայերի արտահոսքի։ Հայերը հեռացել են նաև Ուկրաինայի քաղաքներից։ 1926—1959 թթ. Մոլդավիայում հայերի քանակի զգալի աճը (աղյուսակ № 1) հետևանք է 1940 թ. Բեսարաբիայի (և նրա հայ գաղթօջախի) ՍՍՀՄ կազմի մեջ մտնելու։ Նույն ժամանակամիջոցում փոքրաթիվ հայեր հեռացել են Մոլդավիայի գյուղերից (աղյուսակ № 2)։ 1926—1959 թթ. զգալի թվով հայեր տեղափոխվել են Հայաստան Ադրբեջանի և Թուրքմենիայի գյուղերից ու քաղաքներից, ինչպես նաև Վրաստանի քաղաքներից (տե՛ս աղյուսակները)։

1959—1970 թթ. հայերի աճը գերազանցել է ամբողջ բնակչության աճը Հայաստանում, ՌՍՖՍՀ-ում և Բելոռուսիայում։ Այդ տարիներին հայերի հոսքը դեպի Հայկական ՍՍՀ մի փոքր նվազել է։ Հայկական ՍՍՀ քաղաքներում հայերի բարձր աճը հիմնականում ներհանրապետական տեղաշարժի արդյունք է, որի հետևանքով գյուղերում հայերի աճը ցածր է ընդհանուրից։ ՌՍՖՍՀ-ում 1959—1970 թթ. հայերի բարձր աճը մասամբ բնական աճի, մասամբ էլ հայերի փոքր ներհոսքի հետևանք է։ Հայերը հաստատվել են ՌՍՖՍՀ քաղաքներում, որի հետևանքով նրանցում հայերի տեսակարար կշիռը պահպանվել է 0,27%։ Հայերը տեղաշարժվել են նաև դեպի Բելոռուսիայի քաղաքները, որոնցում հայերի տեսակարար կշռի պահպանմանը նպաստել է նաև ներհանրապետական տեղաշարժը։ Դեպի Բելոռուսիայի քաղաքները հայերի տեղաշարժը պայմանավորված է ետպատերազմյան տարիներին այդ հանրապետությունում ծավալված վերաշինական մեծ աշխատանքներով։ Չնայած հայերի աճն աննշան չափով զիջել է Ղազախստանի ամբողջ բնակչության աճին, Ղազախստանի քաղաքներում բնակություն է հաստատել զգալի թվով հայ բնակչություն, որի հետևանքով հայերի աճը նրանցում գերազանցել է ընդհանուր աճը։ Քաղաքներում հայերի տեսակարար կշիռը պահպանվել է։ Այս ներհոսքը № 2 աղյուսակում չի նկատվում Ղազախստանի գյուղերից դեպի Կիրգիզիայի գյուղերը հայերի շարունակվող տեղաշարժի պատճառով, որի հետևանքով Կիրգիզիայում առավել ևս իջել է քաղաքաբնակ հայերի տոկոսը։ Դեպի Կիրգիզիա հայերի հոսքը չի արտացոլվել № 2 աղյուսակում հայերի համեմատաբար ցածր բնական աճի հետևանքով։ Թուրքմենիայի գյուղերում հայերի բարձր աճը ամբողջ բնակչության և հայերի ուրբանիզացման տեմպերի տարբերության հետևանք է։ Մնացած հանրապետություններից հայերը տեղափոխվել են։

Համառոտակի ամփոփենք։ 1926 թ. հայերը քաղաքաբնակության ամենացածր աստիճաններ ունեին Հայկական ՍՍՀ-ում և տարաբնակության հին վայրերում, ամենաբարձր աստիճաններ՝ XX դ. ձևավորված տարաբնակության վայրերում։ Սովետական իշխանության տարիներին, սոցիալիստական ազգերի իրավահավասարության պայմաններում, ՍՍՀՄ-ում հիմնովին փոխվել է հայկական հին և նոր գաղթավայրերի բնույթը, ձևավորվել են հայերի տարաբնակության նորագույն վայրեր։ Միութենական հանրապետություններում 1926—1970 թթ. քաղաքաբնակ հայերի տոկոսը փոփոխվել է անկախ նրանցում ուրբանիզացման ընդհանուր տեմպերից։ Տարաբնակության վայրերի ձևավորման ժամանակը և 1926 թ. նրանցում հայերի քաղաքաբնակության աստիճանը որոշակիորեն ազդել են 1926—1970 թթ. հանրապետություններում քաղաքաբնակ հայերի տոկոսի փոփոխման վրա։ Ընդհանուր առմամբ, 1926—1959 թթ. հայ բնակչությունը տարաբնակության վայրերից տեղափոխվել է Հայկական ՍՍՀ և միաժամանակ, փոքր չափերով՝ Հայկական ՍՍՀ-ից հեռու գտնվող տարաբնակության նորագույն վայրերը։ 1959—1970 թթ. հանրապետությունների մեծ մասից հայերը շարժվել են դեպի Հայկական ՍՍՀ և մասամբ՝ դեպի Ռուսաստանի, Բելոռուսիայի և Ղազախստանի քաղաքները։ 1926—1970 թթ. հայերի շարժումը հիմնականում ուղղված է եղել դեպի Հայկական ՍՍՀ քաղաքները։ Եթե 1926 թ. Հայկական ՍՍՀ-ում ապրում էր ՍՍՀՄ հայ բնակչության 47,4%-ը և քաղաքային հայ բնակչության 26,8%-ը, ապա 1970 թ.՝ համապատասխանաբար 62%-ը և

50%-ը (տե՛ս աղյուսակ № 1)։ Միութենական այս հանրապետություններից և արտասահմանյան երկրներից հայ ազգի կենտրոնաձիգ այդ շարժման բուն պատճառը սոցիալիզմի օրոք հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթների զարգացման աննախընթաց և բուռն վերելքն է, նրա սոցիալական վերածնունդը։

МЕЖРЕСПУБЛИКАНСКИЕ МИГРАЦИИ АРМЯН В СССР

ПЕТРОС КЕШИШЯН

Резюме

За годы Советской власти изменился характер расселения армян, в частности, доля армян, проживавших в селах и городах как в Армянской ССР, так и в других союзных республиках.

В союзных республиках в 1926—1970 гг. удельный вес армян, проживающих в городах, изменился независимо от общих темпов роста городского населения этих республик. Длительность проживания армян на территории других союзных республик и уровень их урбанизации в 1926 г. определенным образом повлияли на изменение доли армян, проживавших в городах союзных республик в период с 1926 по 1970 гг. За указанный период основной поток миграций армян в СССР был направлен в Армянскую ССР, особенно в ее города. Так, если в 1926 году в Армянской ССР проживало 47,4% всех армян СССР и 26,8% всех городских армян СССР, то в 1970 году они составляли соответственно 62,0% и 60,0%.